

Հաճախակի տրվող հարցեր

Հ: Ի՞նչ է American Express SafeKey®-ն:

Պ: Ձեր American Express Քարտով առցանց գնումներ կատարելիս Դուք ստիպված չեք լինի անհանգստանալ զեղծարարությունների մասին: Ահա թե ինչու ենք մենք Ձեզ առաջարկում SafeKey-ն, որպեսզի վստահ լինենք, որ Ձեր Քարտով օնլայն վճարում իրականացնողը Դուք եք: SafeKey-ն իրականացնում է դա՝ վճարման կատարման փուլում SMS հաղորդագրության տեսքով Ձեզ մեկանգամյա գաղտնաբառ ուղարկելու միջոցով: Վճարումն իրականացնելու էջում սխալ գաղտնաբառ մուտքագրելու դեպքում գործարքը չի իրականացվի և հնարավոր զեղծարարությունը կկանխվի: Գաղտնաբառը ճիշտ մուտքագրելու դեպքում գործարքը հաջողությամբ կիրականացվի:

Հ: Ինչու՞ պետք է ես օգտագործեմ SafeKey-ն:

Պ: SafeKey-ն թույլ է տալիս Ձեզ առցանց գնել Ձեր նախընտրելի ապրանքը կամ ծառայությունը՝ առանց մտահոգվելու զեղծարարության մասին: Փաստացիորեն այն կանխարգելում է նույնիսկ տեղի ունեցող զեղծարարությունը: Սա նշանակում է, որ Դուք կարող եք Ձեր ողջ գործունեությունը ծավալել առցանց գնումների ոլորտում՝ վստահ լինելով, որ մենք Ձեզ համար իրականացնում ենք մշտական վերահսկողություն վեբ տիրույթի հսկայական աշխարհում:

Հ: Արդյո՞ք իմ American Express Քարտն արդեն իսկ չի տրամադրում պաշտպանությունն օնլայն զեղծարարություններից:

Պ: Եթե Դուք հանդիսանում եք Բանկի American Express Gold կամ American Express Blue Քարտատեր, ապա այո, տրամադրում է, սակայն անհրաժեշտ է հաշվի առնել, որ զեղծարարությունից պաշտպանությունը և դրա կանխարգելումը 2 բոլորովին տարբեր գործառույթներ են: Փորձենք հստակեցնել.

SafeKey-ն գործում է Ձեր American Express Քարտով միայն օնլայն գործարքների կատարման ընթացքում տեղի ունեցող զեղծարարության կանխարգելման համար: Ձեղծարարություններից պաշտպանությունը տարբեր է. քանի որ իրականությունը ցույց է տալիս, որ միշտ էլ լինում են նոր տեսակի զեղծարարություններ՝ լինեն դրանք օնլայն, թե՛ օֆֆլայն, զեղծարարություններից պաշտպանությունը մեր խոստումն է Ձեզ ձեռնարկել համապատասխան քայլեր բացահայտված կեղծ գործարքների գծով՝ Ձեր բանկային քաղվածքներում դրանց ի հայտ գալուց անմիջապես հետո:

Զեղծարարության տեղի ունենալու դեպքում մենք կփոխհատուցենք Ձեր կրած կորուստները և կապահովենք Ձեզ նոր քարտով, բայց չէ՞ որ ավելի լավ է ի սկզբանե կանխարգելել՝ հետազայում վերականգնելու փոխարեն, հատկապես երբ առցանց վճարումներն այսօր այդքան հարմար են:

Հ: Արդյո՞ք SafeKey-ն անվճար է իմ Քարտի համար, թե՞ ես պետք է վճարեմ այն օգտագործելու համար:

Պ: SafeKey-ն անվճար է, քանի որ այն Ձեր Քարտի առավելություններից մեկն է: Ձեր գործարքը նույնականացնելու նպատակով մենք պարզապես Ձեր բջջային հեռախոսահամարին կուղարկենք մեկանգամյա գաղտնաբառ:

Հ: Ինչպե՞ս կարող եմ տեղեկանալ արդյոք իմ բջջային հեռախոսահամարը ճիշտ է գրանցված Բանկում:

Պ: Մենք արդեն իսկ ակտիվացրել ենք ծառայությունը բոլոր Քարտատերերի համար՝ հիմք ընդունելով տվյալ պահին Բանկում նրանց գրանցած կամ թարմացրած բջջային հեռախոսահամարները: Այն դեպքում, երբ Դուք փոխում եք Ձեր բջջային հեռախոսահամարը, անհրաժեշտ է տեղեկացնել մեզ այդ մասին՝ զանգահարելով Բանկի շուրջօրյա սպասարկման կենտրոն (010) 319999 հեռախոսահամարով:

Հ: Ինչու՞ եք ինձնից պահանջում մեկանգամյա գաղտնաբառի մուտքագրում, երբ փորձում եմ օնլայն գնումներ կատարել:

Պ: Գործարքի վավերացման այս մեխանիզմը մեր ուղին է՝ համոզվելու, որ հենց Քարտատերն է այդ պահին օնլայն վճարում իրականացնողը:

Հ: Ինչպե՞ս եմ ստանում մեկանգամյա գաղտնաբառ:

Պ: Մեկանգամյա գաղտնաբառերը ուղարկվում են Ձեզ SMS հաղորդագրության տեսքով օնլայն վճարումներ իրականացնելիս՝ վճարման կատարման փուլում: Դրանք ամեն անգամ տարբեր են, այսինքն՝ յուրաքանչյուր գործարքի համար Դուք կստանաք տարբեր թվային կոմբինացիաներ: Գաղտնաբառի ուղարկումից հետո վճարման էջում հայտնում է պատուհան, որը պահանջում է մուտքագրել ստացված գաղտնաբառը: Միայն գաղտնաբառը ճիշտ մուտքագրելու դեպքում գործարքը հաջողությամբ կիրականացվի: